ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 12 >> << Մարտի >> 2019թ. N Մ4/38-2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, երկրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2019 թվականի ներքին աուդիտի հաստատված տարեկան ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի թվով 11՝ <<Շենիկի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Վանանդի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Դալարիկի Հ.Հովհաննիսյանի անվան Հ1 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Վաղարշապատի Խ.Աբովյանի անվան N4 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Ամբերդի Հ.Նավասարդյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արևաշատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արաքսի /Էջմիածնի տարածաշրջան/ միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Աղավնատան Ղ.Աբգարյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում, <<Գրիբոյեդովի Վ.Ռոստոմյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում և <<Գայի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում իրականացնել 2016, 2017, 2018 թվականների բյուջետային տարվա գործունեության ֆինանսական աուդիտ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Արայիկ Հակոբյանի, գլխավոր

0901 ք. Արմավիր, Արովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

մասնագետներ Վիգեն Խաչատրյանի, Սրապիոն Մարտիրոսյանի, Արմինե Գրիգորյանի և Հայկ Պողոսյանի կողմից:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել ֆինանսական աուդիտ անցկացվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին և հաշվապահներին (համաձայնությամբ):

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետին (Ա. Հակոբյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 48 աշխատանքային օրյա ժամկետում:

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5. Սույն կարգադրության կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ.Վարդազարյանին:

6. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

VERIFIED OCSP 4/12/2019 18:59:43 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am